



## Դատախազական համակարգում էթիկայի եւ կարգապահական հանձնաժողովի կազմի մասին

Դատախազների կարգապահական պատասխանատվության ենթարկելու հարցում եւս հիմնական դերակատարումը եւ որոշման կայացումը վերապահված է գլխավոր դատախազին: Դատախազներին կարգապահական պատասխանատվության ենթարկելու գործընթացում դերակատարում ունի նաեւ էթիկայի հարցերով հանձնաժողովը:

«Դատախազության մասին» ՀՀ օրենքի 57-րդ հոդվածով նախատեսված է էթիկայի հանձնաժողովի գործունեության կարգը: Ի լրացումն օրենքի վկայակոչված հոդվածի՝ գործում է նաեւ Դատախազի նկատմամբ վարույթ հարուցելու եւ իրականացնելու վերաբերյալ ՀՀ Գլխավոր դատախազի 2018 թվականի հունիսի 5-ի հրամանով սահմանված կարգը<sup>1</sup>:

Օրենքով եւ կարգով նախատեսվող գործառույթների եւ կարգապահական պատասխանատվության ընթացքի արդյունավետ անցկացման համար կարեւոր երաշխիք է դրանում ներգրավված մարմինների գործունեության երախիքները: Այս առնչությամբ առանձակի կարեւորություն ունի էթիկայի եւ կարգապահական հարցերով հանձնաժողովի ձեւավորման կարգն ու կազմը:

Այսպես, «Դատախազության մասին» ՀՀ օրենքի 23-րդ հոդվածի համաձայն՝

1. Գլխավոր դատախազին առընթեր գործում են էթիկայի և որակավորման հանձնաժողովներ:
2. *Էթիկայի հանձնաժողովը բաղկացած է յոթ անդամից: Էթիկայի հանձնաժողովի կազմի մեջ են մտնում գլխավոր դատախազի կողմից նշանակվող գլխավոր դատախազի մեկ տեղակալ, երեք իրավաբան-գիտնական և գլխավոր դատախազի, գլխավոր դատախազի՝ էթիկայի հանձնաժողովի անդամ չհանդիսացող տեղակալների, գլխավոր դատախազության կառուցվածքային ստորաբաժանումների ղեկավարների, Երևան քաղաքի դատախազի, մարզերի դատախազների, Երևան քաղաքի վարչական շրջանների դատախազների և կայազորների զինվորական դատախազների կողմից ձայների մեծամասնությամբ ընտրված երեք դատախազ: Էթիկայի հանձնաժողովը ղեկավարում է գլխավոր դատախազի տեղակալը:*
3. *Որակավորման հանձնաժողովը կազմված է ինն անդամից, իսկ «Ապօրինի ծագում ունեցող գույքի բռնագանձման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքով նախատեսված գործառույթներ (այսուհետ՝ ապօրինի ծագում ունեցող գույքի բռնագանձմանն ուղղված գործառույթներ) իրականացնող դատախազների թեկնածությունների ցուցակի համալրման նպատակով անցկացվող բաց մրցույթի դեպքում՝ տասնմեկ անդամից: Որակավորման հանձնաժողովի կազմի մեջ են մտնում արդարադատության ակադեմիայի ռեկտորը, գլխավոր դատախազի կողմից նշանակվող գլխավոր դատախազի մեկ տեղակալ, չորս դատախազ և երեք իրավաբան-գիտնական, իսկ ապօրինի ծագում ունեցող գույքի*

<sup>1</sup><https://www.prosecutor.am/myfiles/files/decrees/kargapahakan-Karg.pdf>



բռնագանձմանն ուղղված գործառույթներ իրականացնող դատախազների թեկնածությունների ցուցակի համալրման նպատակով անցկացվող բաց մրցույթի դեպքում՝ նաև երկու փորձագետ, որոնց նշանակում է գլխավոր դատախազը: Փորձագետները պետք է ունենան ապօրինի ակտիվների վերադարձի ոլորտում գիտական կամ պրակտիկ աշխատանքի կամ կոռուպցիոն հանցագործությունների քննության առնվազն երեք տարվա փորձառություն:

Որակավորման հանձնաժողովը ղեկավարում է գլխավոր դատախազի տեղակալը:

4. Սույն հոդվածով սահմանված հանձնաժողովի անդամներն անկախ են: Նրանց գործունեության առնչությամբ որևէ միջամտություն արգելվում է:

5. Յուրաքանչյուր դատախազ կարող է լինել սույն հոդվածով սահմանված միայն մեկ հանձնաժողովի կազմում: Հանձնաժողովների անդամները նշանակվում են երեք տարի ժամկետով, բացառությամբ երկու փորձագետների, որոնք նշանակվում են մեկ տարի ժամկետով:

6. Հանձնաժողովներում նոր անդամների նշանակումները սույն հոդվածով սահմանված կարգով կատարվում են գործող անդամների լիազորությունները դադարելու օրվան հաջորդող օրը:

7. Սույն հոդվածով սահմանված հանձնաժողովների գործունեության, ինչպես նաև դատախազ անդամների ընտրության կարգը սահմանում է գլխավոր դատախազը:

Կարելի է նկատել, որ կարգապահական եւ էթիկայի հարցերով հանձնաժողովի ձեւավորումը կատարվում է միանձնյա գլխավոր դատախազի կողմից, ով նաեւ կենտրոնական դերակատարում ունի դատախազներին կարգապահական պատասխանատվության ենթարկելու հարցում:

Ընդ որում, օրենքով սահմանված չեն չափանիշներ, թե ինչպես է տեղի ունենում անդամների ընտրությունը, սահմանված չեն նաեւ անդամներին ներկայացվող պահանջները:

Նման ընթացակարգով հանձնաժողովի ձեւավորումը կրկին խոսում է վերջինիս անկախության երաշխիքների բացի եւ ըստ այդմ նաեւ գործունեության նկատմամբ վստահության ցածր մակարդակի մասին: Կարելու էր դատախազներին կարգապահական պատասխանատվության ենթարկելու գործընթացի օբյեկտիվությունն ու արդյունավետությունը, ի սկզբանե պետք է սահմանված լինեն այդ գործընթացում ներգրավված մարմինների անկախության ապահովման երաշխիքներ՝ դրանց ձեւավորման փուլից սկսած:

Ըստ այդմ, առաջարկվում է վերանայել «Դատախազության մասին» ՀՀ օրենքով նախատեսվող էթիկայի հանձնաժողովի կազմն ու ձեւավորման կարգը:

Էթիկայի հանձնաժողովի անդամների ընտրությունը պետք է իրականացվի մրցութային հանձնաժողովի միջոցով՝ օրենքով սահմանված հստակ չափանիշների ու օբյեկտիվ պահանջների հիման վրա:



Հանձնաժողովի կազմում ներգրավվում են ինչպես դատախազներ, այնպես էլ իրավաբան-գիտնականներ եւ քաղաքացիական հասարակության ներկայացուցիչ: Կազմում պետք է բացառվի գլխավոր դատախազի եւ դատախազի տեղակալների մասնակցությունը:

## Առաջարկվող փոփոխությունները

### Հոդված 23

1. *Գլխավոր դատախազին առընթեր գործում են էթիկայի և որակավորման հանձնաժողովներ:*

2. *Էթիկայի հանձնաժողովը բաղկացած է յոթ անդամից: Էթիկայի հանձնաժողովի կազմի մեջ են մտնում գլխավոր դատախազի կողմից նշանակվող գլխավոր դատախազի մեկ տեղակալ, երեք իրավաբան-գիտնական և գլխավոր դատախազի, գլխավոր դատախազի՝ էթիկայի հանձնաժողովի անդամ չհանդիսացող տեղակալների, գլխավոր դատախազության կառուցվածքային ստորաբաժանումների ղեկավարների, Երևան քաղաքի դատախազի, մարզերի դատախազների, Երևան քաղաքի վարչական շրջանների դատախազների և կայազորների զինվորական դատախազների կողմից ձայների մեծամասնությամբ ընտրված երեք դատախազ: Էթիկայի հանձնաժողովը ղեկավարում է գլխավոր դատախազի տեղակալը:*

3. *Որակավորման հանձնաժողովը կազմված է ինն անդամից, իսկ «Ապօրինի ծագում ունեցող գույքի բռնագանձման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքով նախատեսված գործառույթներ (այսուհետ՝ ապօրինի ծագում ունեցող գույքի բռնագանձմանն ուղղված գործառույթներ) իրականացնող դատախազների թեկնածությունների ցուցակի համալրման նպատակով անցկացվող բաց մրցույթի դեպքում՝ տասնմեկ անդամից: Որակավորման հանձնաժողովի կազմի մեջ են մտնում արդարադատության ակադեմիայի ռեկտորը, գլխավոր դատախազի կողմից նշանակվող գլխավոր դատախազի մեկ տեղակալ, չորս դատախազ և երեք իրավաբան-գիտնական, իսկ ապօրինի ծագում ունեցող գույքի բռնագանձմանն ուղղված գործառույթներ իրականացնող դատախազների թեկնածությունների ցուցակի համալրման նպատակով անցկացվող բաց մրցույթի դեպքում՝ նաև երկու փորձագետ, որոնց նշանակում է գլխավոր դատախազը: Փորձագետները պետք է ունենան ապօրինի ակտիվների վերադարձի ոլորտում գիտական կամ պրակտիկ աշխատանքի կամ կոռուպցիոն հանցագործությունների քննության առնվազն երեք տարվա փորձառություն:*

*Որակավորման հանձնաժողովը ղեկավարում է գլխավոր դատախազի տեղակալը:*

4. *Սույն հոդվածով սահմանված հանձնաժողովի անդամներն անկախ են: Նրանց գործունեության առնչությամբ որևէ միջամտություն արգելվում է:*

5. *Յուրաքանչյուր դատախազ կարող է լինել սույն հոդվածով սահմանված միայն մեկ հանձնաժողովի կազմում: Հանձնաժողովների անդամները նշանակվում են երեք տարի*



Ժամկետով, բացառությամբ երկու փորձագետների, որոնք նշանակվում են մեկ տարի ժամկետով:

6. Հանձնաժողովներում նոր անդամների նշանակումները սույն հոդվածով սահմանված կարգով կատարվում են գործող անդամների լիազորությունները դադարելու օրվան հաջորդող օրը:

7. Սույն հոդվածով սահմանված հանձնաժողովների գործունեության, ինչպես նաև դատախազ անդամների ընտրության կարգը սահմանում է գլխավոր դատախազը:

**Ուժը կորցրած ճանաչել հոդվածի 2-րդ կետը:**

**Հոդվածի 2-րդ մասը շարադրել հետևյալ կերպ՝**

Էթիկայի հանձնաժողովը բաղկացած է ութ անդամից: Էթիկայի հանձնաժողովի կազմի մեջ են մտնում սույն հոդվածի 2.2 կետով նախատեսված մրցութային հանձնաժողովի կողմից ընտրվող չորս դատախազ եւ չորս իրավաբան-գիտնական:

**Հոդվածը լրացնել 2.1 կետով՝ հետևյալ բովանդակությամբ՝**

Էթիկայի հանձնաժողովի բոլորը անդամները օրենքով սահմանված կարգով անցնում են բարեվարքության ստուգում:

Էթիկայի հանձնաժողովի դատախազ անդամները պետք է ունենան դատախազության համակարգում առնվազն տասն տարվա աշխատանքի փորձառություն, օժտված լինեն մասնագիտական բարձր որակներով ու կարողություններով:

Էթիկայի հանձնաժողովի իրավաբան-գիտնական անդամ կարող է ընտրվել այն իրավաբան գիտնականը կամ այն հեղինակավոր իրավաբանը, որն ունի միայն Հայաստանի Հանրապետության քաղաքացիություն, ընտրական իրավունք, օժտված է բարձր մասնագիտական որակներով և ունի մասնագիտական աշխատանքի առնվազն ութ տարվա փորձառություն:

**Հոդվածը լրացնել 2.2 կետով՝ հետևյալ բովանդակությամբ՝**

Էթիկայի հանձնաժողովի անդամների ընտրության նպատակով ձևավորվում է մրցութային հանձնաժողով: Մրցութային հանձնաժողովի կազմում ներգարվվում են երկու դատախազ, երկու իրավաբան-գիտնական եւ քաղաքացիական հասարակության մեկ ներկայացուցիչ:

**Հոդվածի 5-րդ կետը շարադրել հետյալ բովանդակությամբ՝**

Յուրաքանչյուր դատախազ կարող է լինել սույն հոդվածով սահմանված միայն մեկ հանձնաժողովի կազմում: Հանձնաժողովների անդամները նշանակվում են երկու տարի ժամկետով:

**Հոդվածի 7-րդ կետը շարադրել հետևյալ բովանդակությամբ՝**



Սույն հոդվածով սահմանված հանձնաժողովների գործունեության, ինչպես նաև անդամների ընտրության կարգը սահմանվում է օրենքով: